

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Յ*

Մերիտիններից Մեսրոպ Դերջանի Դինդ (ըստ հորենացու Դնիթ) եպիսկոպոսին և մի քանի աշակերտների հետ առնելով դիմում է Պոլիս. կամ ըստ հորենացու Անատոլիոս սպարապետը Մեսրոպին ու Վարդան Մամիկոնյանին հանձնելով Դերջանի Դնիթ եպիսկոպոսին՝ պատվով ուղարկում է նրանց Պոլիս. «Տալ ցեպիսկոպոսն Դերջանու ցԴնիթ, և բարեպառուքնամբ զնոսա յուղարկէ»:

Մեսրոպի և իր ուղեկիցների ճանապարհորդական ծախսը վճարվում է կայսերական դանձից, ինչ որ մեծ պատվի նշան էր: Այսպես պետք է հասկանալ Կորյունի «և ելեալ յանարույն դիմոսական» բացատրությունը, որ պետք է ուղղել «և ելեալ յարքունույն դիմոսական», վերջին բառով հասկանալով «պետական դրամ, ինչք, ծախս»։ Հմմտ. հուն. *δραχμή* «կառավարական ծախսով» (ավելի ընդարձակ տե՛ս իմ «Արմատական բառարան»-ում դիմոս և դիմոսական բառերը): Ըստ այսմ անճիշտ եմ համարում Ֆնտղյանի մեկնությունը (Կորյուն, էջ 35, տող 532) իբր անաբի «տկար, խեղճ, ռամիկ» և դիմոսական «ժողովուրդ»: Նախ որ անաբի բառը ոսկեզարյան չէ, երկրորդ՝ յանարույն բացատրականը ո՛ր բառին է պատկանում. երրորդ՝ ի՞նչ է նշանակում «ռամիկ ժողովուրդը ելնելով»:

* Շարունակված ամսագրի 1954 թվականի Ց Ց XI-ից, XII-ից, 1955 թվականի Ց Ց I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի Ց Ց I-ից, II-ից, IV—V-ից և VIII—IX-ից:

1. Թորոսյան, «Բաղմավէպ», 1932 թ., էջ 7, նույն «և ելեալ դիմոսական» բառերը ուղղում է «և ելեալ ի հառ» ի ղեսպակս արքունականս», կամ «և կացեալ զճանապարհս արքունականս», իսկ Ակիբյան («Շանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 532)՝ «և ելեալ յանտիօր ի ղեպակս»:

Մեսրոպի ճանապարհորդությունը եղավ ջամաքով՝ Փոքր-Ասիայից, ինչպես որ վերագրվի ժամանակ հատկապես հիշվում է: Ամեն տեղ մեծամեծ պատիվներ տեսավ Մեսրոպ, մինչև հասավ Կոստանդնուպոլիս՝ կայսերական մայրաքաղաքը:

Իսկույն լուր տրվեց արքունիք, թե Մեսրոպ իր աշակերտների հետ Հայաստանից ժամանել է. ընդունելություն նշանակվեց և Մեսրոպ ներկայացավ պալատ՝ Թեոդոս կայսեր, պալատական Ատտիկոս եպիսկոպոսին (պատրիարքին) և իշխաններին. «Զորմէ իսկույն պատմէին յարքունիսն, և մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր աստուածակարգ Թագատրացն և հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ զրանն, որում Ատտիկոս կոչէին» (Կորյուն, էջ 17): Կայսրը հրամայեց Մեսրոպին մի ժամանակ մնալ մայրաքաղաքում, մինչև որ հարկավոր խորհրդակցությունները կատարվին: Զատիկի մոտերն էր. Մեսրոպ մեծամեծ պատիվներ տեսավ եկեղեցուց, արքունիքից և քաղաքի նշանավոր իշխաններից:

Զատիկից հետո խորհրդակցությունները վերջանալով, շնորհվեց կայսերական հրովարտակը, որով ըստ հորենացու՝ նախ Մեսրոպին շնորհվում էր ակումիտ և եկկլեսիաստիկոս տիտղոսները: Մրանցից առաջինը (հուն. *ακούμετος*) նշանակում է «անբուն» (այսինքն անդադար աշխատող), իսկ երկրորդը (հուն. *Συλλεγετος*)՝ «քարոզիչ, բարունակալ», երկուսն էլ տրվում էին նշանավոր և գործունյա կրոնավորների: Թեև ակումիտ տիտղոսի շնորհումը ըստ Կորյունի կատարվեց Հունահայաստանից մեկնելուց առաջ (և եկկլեսիաստիկոս տիտղոսն էլ անձանթ է Կորյունին), բայց երևի պաշտոնական բացառումը տեղի ունեցավ սույն հրովարտակով:

Ակումիտ տիտղոսի գործածության մասին խոսում են Ադոնց, («Հանդէս ամսօրեայ», 1927 թ., էջ 400), Յնտզյան (Կորյուն, էջ 35) և Թորոսյան («Բաղմավէպ», 1931 թ., էջ 471)։ Վերջինս մանրամասն պատմելով ակումիտ տիտղոսի ծագումը, ցույց է տալիս, որ դա գործածության մեջ սկսեց մտնել 441 թվից, և նույնիսկ եթե ընդունենք մի րոպե, որ Մեսրոպի ժամանակ գործածական էր այն, հասարակ «ճգնափոր»-ից բարձր նշանակություն չունի և չի գործածվում իբր բարձր եկեղեցական տիտղոս։ Այս և ուրիշ պատճառներ էլ ի նկատի ունենալով՝ կարծում է Թորոսյան, որ Կորյունի հիշյալ բառը սխալման արդյունք է և նույն տողը պետք է ուղղել «վայելուշ մեծարանօք զսուրբն յարժունիս յողարկելոյ»։ Իսկ Peeters («Revue des études arméniennes», № 9, էջ 211) կարծում է, թե կայսրը Մեսրոպին և իր խումբը ուղարկեց Ակումիտների վանքը՝ բնակություն համար։ Այս վանքը նշանավոր էր իր բաղմավելու միաբաններով, և եթե չկային այնպեղ հայ միաբաններ, անշուշտ ասորիներ կլինեին։ Ստեփան Նազարյանն էլ («Հիստորիայ», 1860 թ., էջ 246) ակումիտ բառը սրբազրում է ԶԵՂՆՈՐԱՅ Երեմիայի մարդ, բնառնի», որ սակայն ոչինչ արժեք չունի։

6-րդ դարում ծագեց Ակումիտ ազանդը, որի մասին Փափաղյանի մոտ («Պատմ. եկեղ.» էջ 286) կարդում ենք. «Ընդ այն ժամանակս ծագեցաւ և մոլորութիւն Ակումիտ կամ Անհանգիստ անուանեալ միայնակեցաց, որք յերիս դասս բաժանեալ՝ կարգաւ միմեանց զկնի գալի և զգիշեր անընդհատ հսկէին յօրհնութիւնս և ի փառաբանութիւնս Աստուծոյ։ Սակալն անկան ապա ի դժպատեհ և յանգոսնելի մոլորութիւնս. զի ոչ կամէին լսել և կամ դաւանել, թէ մի յանձանց Երրորդութեան մարմնացեալ իցէ, ծնեալ ի կուէ և շարշարեալ»։

Անցնելով եկեղեցապատկերս բառին՝ Թորոսյան («Բաղմավէպ», 1932 թ., էջ 9) գրտնում է, որ այս բառը նշանակում է պարզապես «եկեղեցական կամ ժողովական» և չի գործածվում իբրև տիտղոս։ Նա գտնում է, որ բառը պետք է ուղղել եկեղեցապատկերս, որ է հունարեն *ἐκκλησιαστικός*։ Սա բյուզանդական հունաց մեջ եկեղեցական աստիճան էր, որի պաշտոնն էր «1. Պաշտպան եկեղեցական իրավանց և կրոնի վարդապետության, հսկող եկեղեցական դանձերի և վանքերի կարգապահության, 2. Դատավոր խաղաղության կամ հաշտության՝ կրոնական վեճերի և խնդիրների մեջ»։ Այս տիտղոսը տրվում էր սրբությունամբ և խմատությունամբ օծված նշանավոր եկեղեցականներին։ Այս տիտղոսը իրոր

որ հարմար էր Մեսրոպին և անշուշտ Խորենացու մեջ նախապես այդպես էր գրված և հետո անսովոր լինելու պատճառով ձևափոխվեց և դարձավ եկեղեցապատկերս, որ շատ ավելի գործածական և ծանոթ բառ էր։

Ավելի մեծ պատիվներ է տալիս Թովմա Արծրունին. «Կարգել զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յովհաննու Ոսկերեբանի և քաջաց և պիսաւոր վարդապետացն» (էջ 72)։ Կամ ավելի խոշոր բառերով՝ ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «նաև պատրիարքն Ատտիկոս և ամենայն ուխտ եկեղեցւոյն Հանգերձ Թաղաւորան գրեցին զՄեսրոպ ընդ առաջին վարդապետս եկեղեցւոյ, ընդ Աթանասի և Գրիգորեանս, ընդ Բարսեղի և ընդ Յովհաննու Ոսկերեբանի» (էջ 18)։

Տիտղոսների բաշխումից հետո՝ բարձրագույնս հրամայվում էր արտոնել Մեսրոպի գործունեությունը Հունահայաստանում, թույլ տալ, որ հավաքի աշակերտներ, բաց անի դպրոցներ, հայերենի ուսումը տարածի, եկեղեցիներ հիմնի և այլն։ Հրամայվեց նաև, որ հունահայ դպրոցներում աշակերտների սննդի ծախսը վճարվի պալատական հաշվով։

Այս բոլորից դուրս, Մեսրոպ պարտավոր էր հալածանք հանել բարբարիանոս կոչված աշանդավորների դեմ, որոնք սկսած էին տարածվել նաև Հայաստանի, և մասնավորապես Հունահայաստանի մեջ։

§ 5

Խորենացին պատմում է, թե Մեսրոպ ստացավ նաև երկու նամակ, մեկը Թեոդորոս կայսրից և մյուսը Ատտիկոս պատրիարքից, երկուսն էլ Սահակ կաթողիկոսի հասցեին։ Ահա այս նամակները.

Ն ա մ ա կ Ա

Թուրք Թեոդոսի առ Սահակ

Ինքնակալ Թեոդոս Աւղոստոս և կայսր Հռովմայեցոց, մեծի Սահակայ եպիսկոպոսի խնդալ։

Հրամայեալ մեր տեսանել զթուղթս, վերահասու եղաք զընդոցս առ ի քէն. և մեղադրեցաք յոյժ, զի ամենայն սրտու միտեցար զհետ հիթանոս Թաղաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ։ Եւ առաւել յայսմ մեղադիր եմք. զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիք զիմաստից գիտաւ։ Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ժառաջիցդ արհամարհել զայդպիսի ուսմամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղև, գրեցաք՝ զի ամենայն փութով ուսցին, և զքեզ պա-

տուով ընկալցին, որպէս զարդարն վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին կենարու, և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց: Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդան որդի որդիացելոյ քո, և յառաջին վարդապետսն գրեցաք զՄեսրոպ: Ողջ լին:

Ն ա մ ա լ ի Բ

Թուրք Ատտիկայ առ Սահակ

Ատտիկոս ինքնազուխ եպիսկոպոս Կոստանդնուպոլսի, եղբօր սիրելոյ աթոռակցի՝ Սահակայ եպիսկոպոսի Հայոց ի Տէր խնդալ:

Բազում զոհութիւն Աստուծոյ մատուցանեմք յազազս քո բարեհամբաւութեանդ ի մէջ ալղպիսի բարրարոս աղգի. այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց: Եւ առաւել ընդ այս զարմանամք, եթէ զիա՞րդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա: Եւ ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցայք ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յաղեցուցանել. մինչև Ամենակալին տեսեալ զանոսի աշխատութիւն, բոլիսեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք: Իսկ արդ հրամանաւ ինքնակալին Ազոստոսի տունալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր, և ազանդող բորբորիտոնաց՝ կամ հաւանել, և կամ հալածել ի բումմէ վիճակէդ: Եւ զատաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկեղեցիատիկոս:

Խորենացու մեջ բերած հիշալ երկու նամակներ իրականութեան մեջ ամենեւին չէին կարող գոյութիւն ունենալ և են միմիայն արդունք երեակայութեան: Այս ո՛չ թէ միայն այն պատճառով, որ Կորյուն չի հիշում զդանք, կամ թէ Խորենացին չէր կարող զրանք ձեռք բերել, այլ մանավանդ այն պատճառով, որ նրանց պարունակութիւնը հակառակ է պատմութեան: Նամակները պատմում են, թէ Մեսրոպ գրերի գյուտը հաջողեցնելու համար դիմեց զանազան ասորիների, և երբ նրանցից օգուտ չտեսավ, Աստված հրաշքով հայտնեց այդ գրերը: Բայց այս պատմութիւնը, ինչպես արդեն գիտենք, Խորենացու հնարածն է: Մեսրոպ չդիմեց զանազան ասորիների, այլ ինքը՝ իր աշակերտների հետ աշխատեց Եդեսիայում, և երբ կարիք զգաց դիմելու մի գեղազորի, ընդհակառակը զգուշացավ մի ասորու դիմելուց և հույն

Հոսիանոսին դիմեց: Հայերեն գրերը համարել հրաշքի կամ աստվածային հայտնութեան արդյունք՝ նույնպես Խորենացու հնարածն է: Իրականութիւնը այն է, որ Մեսրոպ իր սեփական աշխատանքով հնարեց տառերը: Ցավալի է, որ Տաղավարյան էլ (էջ 36) իբր ստույգ է ընդունում այս նամակները և զրանցից պատշաճ եզրակացութիւն հանում: Իբր թէ երբ Սահակ ու Մեսրոպ անցան Հունահայաստան՝ հայերեն գրերը տարածելու և հույները արգելեցին, այդ նրանից էր, որ կարծում էին, թէ հայերեն տառերը ասորերեն ալբուրենից են կազմված և ո՛չ թէ հունականից: Իսկ երբ լսեցին, թէ աստվածային հայտնութեամբ է տրված, իսկույն թույլատրեցին!!!:

Ատտիկոս պատրիարքը չէր կարող գրել Սահակին, թէ բորբորիտների աղանդին «կա՛մ հավանիւ և կամ հալածիր»։ Եթե ինքը Ատտիկոս հակառակ էր այս աղանդին (և գիտենք, որ շատ հակառակ էր), անպատճառ պիտի գրեր հալածել, և երբեք հարաբերութիւն չունենալ նրանց հետ: Գալով ժամանակի ոճին, Խորենացին դիտմամբ տվի է այդպիսի անբաղադրական և արհամարհոտ գույն, որպէսզի հունական գոռոզութեան հետ պատշաճեցնելով՝ կեղծութիւնը ծածկի և ընթերցողին բնական ցույց տա: Բայց հաղիվ թէ Թեոդոս, մանավանդ Ատտիկոս ալղպիսի անվախել լեզու բանեցնելին այնպիսի մի բարձրաստիճան հայրապետի հետ, որ իրենց իշխանութեան տակ չէր և որի բարեկամութիւնը պիտի փնտրեին՝ իբրև հարեան քրիստոնյա մի մեծ աղգի հոգեւոր պետի: Ուրիշ նամակներ էլ ունենք Սահակին և Մեսրոպին ուղղված՝ հույն հոգեւոր իշխանութիւնից, ոսկեզարդան հայերեն թարգմանութեամբ (և ոչ թէ Խորենացու լեզվով), այս անգամ հարազատ և վավերական, և այնտեղ տեսնվում է, թէ ինչպիսի պատկանելի վերաբերմունք է ցույց տրվում այդ երկու մեծ անձնավորութիւններին:

Սահեք վերջապես, որ Վարդան Մամիկոնյանի ուղեկցութիւնը և այս առթիվ կայարից ստացած ստրատելատութեան պաշտոնը բոլորովին ենթադրական է: Խորենացին արել է այս բանը՝ բարձրացնելու համար Մամիկոնյանի աստիճանը. բայց Կորյունի պատմութիւնը ցույց է տալիս, որ Վարդան դեռ մինչև Սահակի մահը (438 թ.) չունեւ այնպիսի նշանավոր աստիճան, ինչպես է ստրատելատութիւնը կամ ընդհանուր զորավարութիւնը, որ Սահակի մահից հետո ստացավ: Եթե Վարդան ունենար այնպիսի բարձր մի պաշտոն և այն էլ ստացած հունաց կայսրից՝ Մեսրոպի հետ ուղեկցութեան ժամանակ, անկարելի էր, որ Կորյուն լուրջան մատեներ ու չհիշա-

տակեր: Կորյուն երկու անգամ առիթ է ունեցել ճշտով նշանակելու Վարդանի անձը: Բայց ինչպե՞ս համեստ կերպով Այսպես էջ 13՝ «Առանկ երանելուն Սահակայ զՄամիկոնեան որեան» ի վարժա վարդապետութեանն պարագեցուցեալ, որոց առաջնոցն Վարդան անուն էր, որ և Վարդկան կոչէր: Իսկ եթե այս հատվածը Վարդանի աշակերտության է վերաբերում, ահավասիկ մի ուրիշը, երբ արդեն վաղուց Վարդան ստորադասության բարձրացած պիտի լիներ՝ ըստ խորհնացու: «Հանդերձ աստուածասեր իշխանակնու միով, որ անուանեալ կոչէր Դուատր, որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոցն չիւնցար» (Կորյուն, էջ 25): Այս երկու հատվածներից պարզ է, որ զեռ մինչև Սահակի վախճանը Վարդան հասած չէր այդ պաշտոնին: Ուստի և խորհնացու գրածը սխալ ենթադրության վրա է հիմնված միայն:

Գարագաշյան, իր Քննական պատմության մեջ (Հատ. Գ, էջ 219) քննության ենթարկելով այս նամակները, հասնում է նույն եզրակացության: Նա նկատում է, թե Թեոդոս կայսեր մեղադրանքները (թե ինչո՞ւ Սահակ մոտեցել է աստրիներին և նույնիսկ մի թղթիկ չի գրել, թե ինչո՞ւ արհամարհել է Պոլսի իմաստուններին, որի համար կայսրն էլ իրավունք պիտի ունենար հրամայելու, որ հունահայերը արհամարհեն այդ գրերը, բայց որովհետև Աստուծու հրաշքով են դանդաղ նրանք, ուստի ներքի է սովորել և այլն) «չունին ամենևին նշանակություն ի բերան Թեոդոսի»: Ավելի անտեղի են Աստիկոսի խոսքերը Հովհան Ոսկերեքանի մասին: Աստիկոսը հայ էր, Սևրաստիա քաղաքից: Գնաց Պոլիս և կրոնական բարձր աստիճանի հասավ: Նա հակառակորդ և թշնամի էր Հովհան Ոսկերեքանին, որին արտրել տալով՝ խելց ձեռքից պատրիարքական աթոռը: Ինչպե՞ս կարող էր այս մարդը ասել Ոսկերեքանի համար, թե «զիա՞րդ թողեր զազդիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սակաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա»: Այս խոսքերը կարող էր ասել ոչ թե իր անմիջական հաջորդն ու հակառակորդը, այլ շատ հետին մի մարդ, որի ժամանակ Ոսկերեքանը արդեն Հույն եկեղեցու սրբերի կարգն էր դասված: Այս բանը տեղի ունեցավ 434 թվին, Պոսղո պատրիարքի ձեռքով, որ նրա աշակերտ էր և վեցերորդ հաջորդը. նա էր, որ արքայազն չարաչար նեղություն մեռած Ոսկերեքանին մեծ պատվով փոխադրել տվեց Պոլիս (ընդարձակ տե՛ս Ալիշանի «Յուշիկը», Հատ. Բ, էջ 96):

§ 6

Մեսրոպ ստանալով կայսերական հրովարտակը, հրաժեշտի ողջունքն տվավ թաղավորին, պատրիարքին, եկեղեցականներին ու իշխաններին, և բոլոր իր ուղեկիցների հետ բարձրանալով կայսեր կողմից շնորհված արքունական կառքերը, հանապարհ ընկավ դեպի Հունահայաստան: Կորյուն պատմում է, թե Մեսրոպի վերադարձը ավելի մեծ շքով եղավ՝ նրանք բռնեցին արքունական մեծ պողոտան, որ այժմվա Սկյուտարի կամ Քեղիկոնի (Գաղբլոյ) կողմերից սկսելով՝ տանում էր մինչև Հայաստան: Հանապարհի վրա դանդաղ բոլոր քաղաքները հանդիպեց Մեսրոպ և ամեն տեղ դառավ փառավոր ընդունելություն, մինչև հասավ Անտիոք և ներկայացավ Արևելքի սպարապետ Անատոլիոսին, որին ներկայացրեց կայսերական սակերը (արքունի սրբազան հրովարտակը): Սպարապետը Մեսրոպի ձեռքով ընդունելով այդ հրովարտակը, իսկույն ձեռնարկեց կայսերական հրամանները դործադրելու: Անմիջապես պատգամավորներ ուղարկեց Հունահայաստանի բոլոր դավառները, հրամայեց հավաքել հայ մանուկներ և տեղավորել նրանց զանազան հրամար վայրերում: Բոլորի համար նշանակվեց ոռնիկ՝ արքունի հաշվով: Մեսրոպ սկսեց ման դալ այդ քաղաքները, քարոզել, ուսուցանել և իրեն հանձնված աշակերտներին կրթել հայերենի ուսման մեջ: Այնուհետև Մեսրոպ սկսեց քննել բարբարիանոսների աղանդը: Նախ տեսնենք, թե ի՞նչ աղանդ է սա:

Չամչյան (Հատ. Ա, էջ 765) ենթադրում է, թե բարբարիանոսները Լուսավորչի ժամանակից Հայաստանում մնացած օտարազգի և ոչ հայ կապալառուներ էին, որոնց հետ հետո խառնվել էին նաև սակավաթիվ հայեր: Այս աղանդավորները պաշտում էին տարբեր, ումանք էլ արեգակը, և զրադաշտական մոգերից փոխառություններ էին կատարած. այս պատճառով էլ կոչվեցին Արևորդիք:

Ըստ Ի. Հարությունյանի (էջ 194) բարբարիանոսները «զնոստիկական հերետիկոսներն էին ամենատեսիլի աղանդավորներն էին»:

Օրմանյան (Ազգապատմ., էջ 297) համարում է, որ նույն էին նրանք, ինչ որ այլուր կոչված մոզնիշայք, հունարեն նվախության կամ Մեսալյան: Այս աղանդը ծագել է Ասորիքից: Նրանք ամեն ծես ու պաշտամունք ավելորդ էին համարում և մեղքերի թողության համար մի ազդիք բավական էին համարում: Ուղղափառները ասում էին նաև, թե նրանք ամեն տեսակ բռնություն, հափշտակություն և անիրավություն համարձակ գործում էին և հասարակ եղեռնագործի կերպարանք ստանում:

Կոնիքիբի Հայագետը, իր *«The Armenian church»* աշխատության մեջ գտնում է, որ դրանք նեստորականներ էին: Յնտգլյան (Կորյուն, էջ ԻԲ—ԻԿ) ավելի բնդարձակ քննելով այս խնդիրը, գտնում է, որ սխալ է Կոնիքիբի կարծիքը: Նեստորականությունը գլուխ բարձրացրեց, երբ Նեստոր Պոլսի պատրիարքական աթոռը բարձրացավ (428 թ.): Իսկ 422—423 թվերին, երբ Մեսրոպ Պոլսի էր գնացել, դեռ այս աղանդը բոլորովին չէր: Այս միջոցին հուզվող աղանդներն էին Արիոսականություն, Հոգեմարտություն, Պեղադյանները, Մանիքականները և Փոտինյանները: Արդարև Կորյուն խոսում է նեստորական աղանդի տարածման մասին էլ Հայաստանում, բայց բավական հեռու, Սահակի մահից քիչ առաջ, շուրջ 435-ին: Եթե այս վերջինը նույն լինեք առաջինի հետ, Կորյուն նեստորականների վրա երկրորդ անգամ խուսելիս անշուշտ «դր ի վերնոյն յիշեցաք» ասելու էր, բայց իր սովորության (Յնտգլյան, էջ ԻԿ):

Կորյուն խոսելով բարբարիանոսների մասին, կոչում է նրանց «ղծպատեհ, կամակոր և ժանտազործ»: Վերջին բառով Յնտգլյան հասկանում է «պղծագործ, պոռնիկական», որի համար իբրև ապացույց է բերում հետևյալ վկայությունները:— Զժանդագործին Բահարու զհիւրընկալութիւն լրտեսացն (Կորյուն, էջ 9, ապ. 1894 թ., ասում է պոռնիկ Բահարի մասին): Ժանդագործ երկիրն Սողոմացուց. Ազաթ, էջ 226. Յոչնչէ կարող էր առնել զլուսատւոսն... և ոչ ի ժանդագործութենէ (Նդնիկ, պատմիւոց հետո, թե լուսավորները «ի մայրնիս և ի քեռական առակաւոց արարան»): Արդ՝ այս ժանդագործ, պղծագործ կամ պոռնիկական ածականը տրվում է նաև մանիքեցիներին, ուստի Կորյունի բարբարիանոսները մանիքեցիներն են բայտ Յնտգլյանի, և կամ բայտ Մինդանա ասորագետի burburiani կոչված ասկավածանոթ աղանդը՝ որ Վերին Միջագետք և այստեղից էլ Հայաստան տարածված էր և որի գեմ մի քանի տեղ գրել է Նիբրեմ (տե՛ս Յնտգլյան, էջ 38):

Լավագույն բացատրությունը տալիս է Թորոսյան (*«Բաղմամվա»*, 1932 թ., էջ 7) աղանդը կոչվում է բարբարիանոս կամ բարբոսոս (հունարեն βόρβορος «տիղմ, ցեխ» բառից՝ իր «աղմային, պղծագործ»): Այս աղանդը ծագել է առաջին դարի վերջերից, հինգերորդ դարի սկիզբը այնքան աճել ու ծաղկել է Բյուզանդիոնում և շրջակայքում, և այնպիսի առևելի քանդում ու ավերում է հասցրել ընտանիքների մեջ, որ ժողովուրդը զգված ու զայրացած՝ բուռն բողոքներ է հասցրել մինչև կայսերական գահը: Սրա վրա

գուրս է եկել կայսերական խիստ հրաման՝ բնաջինջ անելու և պետության սահմաններից դուրս վտարելու նույն աղանդի հետևորդներին: Նրանք էլ վտարվելով Երկրից՝ անցան եգիպտոս, Ասորիք, Միջագետք, Հայաստան և այլն: Այս բանը պատահեց հենց Մեսրոպի ուղևորության միջոցին դեպի Պոլիս, որով և եղավ կայսերական պատշաճ կարգադրություն՝ հալածելու բոլորորիանոսներին Հայաստանից:

Երբ Կորյուն ասում է սկսեց «քննել» աղանդը, պետք է հասկանալ անշուշտ, թե նա կանչեց մի առ մի այդ աղանդի հետևորդներին և նրանց քարոզիչներին, հարցափորձեց, թե իրոք հետևո՞ւմ են այդ աղանդին և որքան կարող էր ջանաց համոզելու և ուղղափառ բրիստոնեական վարդապետության դարձնելու: Իսկ երբ անկարելի եղավ համոզել, բայտ Կորյունի «իբրև ոչինչ գտանէր հնարս յուզղութիւն ածելու», այն ժամանակ ձեռք առավ այն բռնի միջոցները, որոնք սովորական էին այն ժամանակ հերձվածողների դեմ հարուցված հալածանքների մեջ, այն է բռնաարկություն, տանջանքներ, գեղարաններ և ծեծ. «Առեալ ի գործ արկանէր զվշտառացուցիչ դաւադանն, ծանրագոյն պատուհասիք ի բանդս, ի տանջանս, ի դեկարանս» (Կորյուն, էջ 18): Իսկ երբ այս պատիժներն ու տանջանքներն էլ օգուտ չունեցան և հերձվածողները անխախտ մնացին իրենց համոզմունքի մեջ, Մեսրոպ՝ իհարկե քաղաքական իշխանության ձեռքով, դիմեց ավելի ծանր միջոցների. ջարդում էին հերձվածողի այս կամ այն անդամը, տաղում էին հակառակ, մրտադ և այսպես խաբանած դուրս էին վտարում երկրի սահմաններից (աքսորում): «Իսկ յորժամ այնու ևս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խալտառակեալս, և յաշխարհէն կորչէին»:

Այստեղ էլ Կոնիքիբի՝ իր վերոհիշյալ աշխատության մեջ սխալվում է բայտ Յնտգլյանի (Կորյուն, էջ ԻԲ—ԻԿ և 39), ասելով, թե Մեսրոպ այդ աղանդավորներին ողջ-ողջ այրել է ավելի Յնտգլյան ցույց է տալիս, որ Կոնիքիբը սխալ է հասկացել խաճճեալ բանը, որ ոչ թե «այրել» է նշանակում, այլ «խանձել, տաղել, խաբանել, մորթի վրա տաք երկաթով աշրկելով նշան անել»: Այս նույն պատիժը սահմանվեց նաև Ծահապիվանի ժողովում (446 թ.) կախարդների համար. «Որ լոկ դիւթեն և ոչ կախարդեն թէ՛ այր, թէ՛ կին ի դիւթութեան գուցին՝ Ժմ կրկին դան արբցեն, խանձեցին, մրեցին, ոսկրարկցին, յորկանոց տարցին»: Խաբանումը նրա համար էր, որ ամեն մարդ տեսնի ու ճանաչի մեղապարտին:

Բարրարիանոսների հաղածումից հետո, Մեսրոպ շարունակեց իր գործը, լայն շափերով տարածեց կրթությունն ու քարոզությունը, և հավաքեց բազմաթիվ հունական եկեղեցական հայերի գրքերը, ո՛չ թե հատկապես հայերենի թարգմանելու համար, այլ կարգադրու և իր քարոզների համար նյութեր բաղելու նպատակով, ինչպես որ Կորյուն էլ հատկապես հիշում է, թե այդ գրքերով ծովացրեց իր վարդապետության խորությունը (Կորյուն, էջ 18)։

Նույն ժամանակները Մեսրոպ պատահեց Բենիամին անունով մի աղվան քահանայի Մեսրոպ, որ ժողովրդի մեջ դիր ու գրականություն, և գրականություն միջոցով ուսում և կրոն տարածելու ցանկություններ ցրված մի անձ էր, օգուտ քաղեց այս առիթից և նույն անձից օգտվելով՝ ուղեց հարկ աղվաններին լեզվի համար սեփական այբուբենը։ Ինքը աղվաններին լեզվին բոլորովին անծանոթ էր, բայց այնպիսի մի անձի համար, որ արդեն երկու լեզուներին այբուբենն էր հնարած, զմիայն չէր զանազան քննություններով երևան հանել ու համառել նույն լեզվին սեփական ձայները։ Այսպես էլ արավ Մեսրոպ։ Նա հարցրեց, քննեց նույն Բենիամին քահանային, աղվաններին լեզվից զանազան բաներ հանել տվեց, և վերջապես կազմեց աղվաններին այբուբենը (Կորյուն, էջ 18)։

Աղվաններին լեզվի դրերը հնարելուց հետո, արդեն Հունահայաստանի դպրոցական ու քարոզչական գործը վերջացրած լինելով, Մեսրոպ հրաժեշտ տվեց նախնուհույաններին, իշխաններին և բոլոր եկեղեցականներին։ Իր ժողովրդի և եկեղեցիների ու դպրոցների վրա վերակացու նշանակեց իր աշակերտներից երկուսին, առաջինը ննովր և երկրորդը Դանան։ «Արք կրօնաւորք և յառաջագէմք յաւետարանական ստաստութեանն»։ Իսկ ինքը հետն առնելով իր բազմաթիվ գործակից աշակերտներին, ճանապարհ ընկավ դեպի Մեծ Հայք (Պարսկական Հայաստան)։ Հասավ Նորաքաղաք կամ Վաղարշապատ, ներկայացավ Սահակ կաթողիկոսին և Արտաշես թագավորին, որ շատ ժամանակ չէր դա՛հ էր բարձրացել, պատմեց նրանց բոլոր այն գործերը, որ մեծ հաջողությամբ կատարել էր Հունահայաստանում, և հանգրստություն առնելու համար մի քանի օր նույն քաղաքում դադար առնելուց հետո, այս անխնայ գործիչը պատրաստություն սկսեց տեսնել, այս անգամ էլ դեպի Աղվանք երթալու։

1. Ակինյան («Հանգես Ամսօրհայ», 1935 թ., էջ 535) այս աղվաններին համարում է արեւելյան գոթացի և Մեսրոպին էլ արեւելյան գոթերի այբուբենի հեղինակ։ Դեպքը տեղի ունեցած է Պոլսում։

Այս է ահա Մեսրոպի գործունեությանը Հունահայաստանում՝ Կորյունի հավատարիմ պատմության համաձայն։ Բայց երբեմնե, որ արդեն խառնակել էր սկսել այդ գործունեության նախնական մասերը, նույն խառնակությունը մինչև վերջն էլ տանում է։ Այսպես, երբ Մեսրոպ Պոլսից դառնում է Հունահայաստան, դեռ Սահակ այնտեղ էր։ Եվ ահա բոլոր իշխանները, գլխավորներն ու նշանավոր մարդիկը, հավաքվում են Մեսրոպի և Սահակի մոտ, և այս երկու անձերը շուտով սկսում են սովորեցնել նրանց։ Ինչպես տեսնում ենք, այստեղ մանուկների հավաքում չկա և փոխանակ մանուկների՝ իշխաններն և երեւելի մարդիկն են աշակերտում, ինչ որ շատ տարբերակ է։

Այս միջոցին պարսից՝ Վոամ թագավորը տեսնելով, որ առանց հայ նախարարների հետ հաշտվելու՝ չի կարող կառավարել Հայաստանը, Սմբատ ասպետի միջոցով հաշտություն է խնդրում։ Մի խումբ նախարարների ղալխն են Սահակի մոտ և խնդրում են, որ իր աթոռ դառնա և ցանկալի միաբանությունը հաստատե։ Սահակ համաձայնվում է. ուստի Մեսրոպին թողնում է Արեւմտյան Հայաստանի վերակացու, նրան օգնական է տալիս Վարդան Մամիկոնյանի երկու եղբայրներին՝ իր Հմայակ և Համադասպան թոռներին, հրամայում է քննել բոլոր բնակիչների աղանդը և կա՛մ համոզել կա՛մ շարժարանքով հաղածել։ Իսկ ինքը անցնում է Այրարատ նահանգը։ Այնտեղ հավաքում է բոլոր նախարարագոծեներին, Սմբատ ասպետին ու Վարդան Մամիկոնյանին, ուղարկում է պարսից պալատը, և այսպես երկու կողմերի միջև հաշտություն կնքելով՝ Վոամշապուհի որդին Արտաշեսը նշանակվում է Հայաստանի թագավոր։ Սրանից հետո տեղի է ունենում կարճ կամ Թեոդուլոսի քաղաքի շինությունը՝ Անատոլիոսի ձեռքով՝ Թեոդոս կայսեր հրամանի համաձայն, իրեն թե հայոց պաշտպանության համար։ Իսկ Մեսրոպ դեռ Հայաստանում՝ Շաղգոմք անուն «անապատ և հովանաւոր» տեղում շարունակում էր իր դասերը, մինչև «քովանդակեաց գվարդապետութիւնս առաջին առեւոյց խմբիցն» (Երեւի ուղում է ասել առաջին աշակերտական խումբը կարգացրեց վերջացրեց, բայց մյուսների մասին խոսք չկա)։ «Քանզի ոչ որպես արուեստ ուսուցանէր, այլ իբրեւ զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր» (Երբեմնացի, Գ կ)։ Այնուհետեւ իր տեղը վերակացու թողնելով իր աշակերտներից մի քանիսին, ինչպես Ղևոնդին և ննովրին Սպերում, Գնիքին Դերջանում, Դանանին Եկեղիքում, ինքը դարձավ Այրարատ և այստեղից էլ Գողթն։

Ինչպես տեսնում ենք, բոլոր գլխավոր դերերը Խորենացին Սահակին է տալիս. իսկ Մեսրոպ մի հլու գործիք է, որ ծառայում է միշտ Սահակին: Իզուր Բեռզոս կայսրը այն տիտղոսները Սահակին չտվեց: Այս բանը նորոթյունն չէ մեզ համար: Գալով ազվաներեն զրերին, որ Մեսրոպ հնարեց Հունահայաստանում, Խորենացին այնպես է փոփոխում հանդամանքները, որ առնվազն զարմանալի է: Բայց այս, ինչպես Մեսրոպի ճանապարհորդության այլակերպության մասին պիտի խոսենք հետո:

§ 7

Գարագաշյան (Քննական պատմություն, հատ. Գ, էջ 216—218) Հունահայաստանի քարոզչության դարձում գտնում է քաղաքագիտական վարմունք: Կեսարիայի միտրոպոլիտները և Կոստանդնուպոլսի պատրիարքները իրար հետ մրցման մեջ էին կրոնական զերագահություն ձևեր բերելու համար: Կոստանդնուպոլսի կայսերական մայրաքաղաք լինելով՝ այնտեղ նստող պատրիարքներն էլ ամենքի վրա առաջնակարգ դիրք ուզում էին ունենալ. իսկ Կեսարիայի միտրոպոլիտները մերժում էին այս զերագահությունը և հատկապես Հայոց Նիկեացիներին իրավասության տակ էին ճանաչում: Հունահայաստանի մեջ գործելու արդելքը հետևարար Կեսարիայի միտրոպոլիտն էր հանել, և այն էլ աշխարհական իշխանության միջոցով: Սահակ օգուտ քաղելով երկու մրցակիցների հակառակությունից, իրրե քարձրագույն աստան՝ դիմեց կայսեր և պատրիարքին: Այս երկուսի համար էլ Սահակի դիմումը՝ իրրե նշան հպատակության հանձնի և շողորթիվ էր միանգամայն, մանավանդ պատրիարքին, որ թերևս սպասում էր այսպիսի մի առթի, ցույց տալու համար իր վերին իշխանությունը Կեսարիայի միտրոպոլիտի վրա: Ուստի սիրով ընդունեց Սա-

հակի խնդիրը և ընդառաջեց և անշուշտ կայսեր առաջ էլ քարեխոսեց:

Հունահայաստանի քարոզչությունը աղգային տեսակետով մեծ օգուտ ունեցավ. սրանով Հայաստանից բաժանված գավառները գտնե լեզվով ու գրականությամբ նորից միացան մեծ ամբողջության հետ:

Ա. Մ. Փ. Ո. Փ. Ո. Մ.

1. Մեսրոպ ընդհանուր այցելություն է տալիս Հայաստանի գավառներին:— 2. Մինչև այն ժամանակ եւ Բարդուղի էր Պարսկահայաստանում, այժմ մտնում է Հունահայաստան:— 3. Հունաց սպարապետը մեծ պատվով ընդունեց Մեսրոպին, բայց Բարդուղյան արտոնություն չէր կարող տալ մինչև կայսերական կարգադրություն չտանաւ Պոլսից:— 4. Կայսերական հրավերով՝ Մեսրոպ իջնում է նախ Մելիտեն և այնտեղից գնում է Պոլիս. ներկայանում է Բեռզոս կայսեր և Ատտիկոս կարդիկոսին. ստանալով արտոններ և գործունեության ազատություն՝ վերադառնում է Հունահայաստան:— 5. Այս առիվ Խորենացու մեջ բերած նամակագրությունը կայսեր, Ատտիկոսի և Սահակի միջև կեղծիք է:— 6. Մեսրոպ Հունահայաստանում էլ բաց է անում դարձներ, աշակերտներ հավաքում և հայ գրի ուսումը տարածում: Հալածանք է հանում բարբարոս կոչված աղանդավորների դեմ: Պատահեց Բենիամեն անուն աղվան մի քահանայի և առիթից օգտվելով հեռուց աղվաններեն գրեր:— 7. Հունահայաստանի Բարդուղյունը մի մեծ քաղ եղավ հայ ազգային ամբողջականության տեսակետով:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Հնդհատում ենք մեծանուն հայագետի այս արժեքավոր աշխատության մաս առ մաս տպագրությունը, հետադառնում Մայր Աթոռի տպարանում այն առանձին հատորով հրատարակելու մտադրությամբ:

